ՍՏԱՄԲՈՒԼԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Բարձրագույն կրթական այս հաստատությունը հիմնվել է 1886-ին Կոստանդնուպոլսի Ղալաթիո թաղամասում՝ պատրիարք Ն. Վարժապետյանի և հայ մտավորականության առաջավոր ներկայացուցիչների ջանքերով: Նպատակն էր սաներին տալ հայեցի կրթություն, Պոլսի և գավառների հայկական դպրոցների համար ուսուցիչներ պատրաստել:

Այստեղ դասավանդել են այնպիսի հեղինակավոր անձինք, ինչպիսիք են Հովսեփ Շիշմանյանը /Ծերենց/, Թ. Կյուլեսերյանը, Պերպերյանը, Եղիշե Տեմիրճիպաշյանը, Հակոբ Պարոնյանը, Հակոբ Ասատուրը, Հակոբ Օշականը, Լևոն Շանթը, Վահան Թեքեյանը, Գարեգին Սրվանձտյանը և այլք: Դասավանդել է նաև Կոմիտասը:

Պոլսահայերը, մասնավորապես Կեդրոնականի ուսուցիչները, աշակերտները կարողանում են պահել, պահպանել մեր հոգևոր արժեքները և վարժարանն ավարտելուց հետո հեռանում՝ զինված բարձր գիտելիքներով, ինչպես խոստովանում է Դարա Խաչիկօղլուն. «Հիմա ավելի հետաքրքիր եմ կյանքի օրվա դեպքերու հանդեպ։ Կեդրոնական հաճախելով՝ թե՛ համայնքեն չհեռացա, թե՛ մեր մշակույթի և պատմության մասին ավելի ընդարձակ տեղեկություն ունեցա»։

Տարեցտարի Ստամբուլում կրճատվում են հայկական դպրոցները։ Ազգային Կեդրոնական վարժարանն իր վաղեմի և այժմյան համբավով մնում է դեռևս կայուն և նախընտրելի։ «Ստամբուլում գործող հայկական 16 կրթօջախների ճակատագիրը անկանխատեսելի է. պոլսահայերից շատերը արտագաղթում են, մի մասը նախընտրում է իրենց երեխաներին տալ թուրքական, անգլիական, գերմանական դպրոցներ, որտեղ կրթական որակն ավելի բարձր է և զգալիորեն հեշտացնում է հետագայում համալսարաններ ընդունվելու հարցը»,- գրում է Ռուբեն Մելիքյանը։

Այս պարագայում Ազգային Կեդրոնական վարժարանը ազգահավաք, լեզվապահպան մեծ դեր է կատարում. աշակերտների առավելագույն շարժ կա դեպի Կեդրոնական։ Բարձր է ուսման մակարդակը, որի շնորհիվ աշակերտների 95%-ը ընդունվում է իր ընտրած համալսարանը։ Կեդրոնականը ժամանակի հոլովույթում պահել ու պահպանել է իր ուրույն դիմագիծը այնպես, ինչպես Թուրքիայի տարածքում գտնվող սակավաթիվ եկեղեցիները, որոնք չեն ավերվել, չեն զրկվել խաչից ու պատարագից։

Հայկական կրթօջախները աշխարհի բոլոր ծայրերում օազիսներ են, փրկության հանգրվաններ, որոնց շնորհիվ հայորդիների շուրթերից չեն կորչում մեր այբն ու բենը, չեն մոռացվում Նարեկացին ու Կոմիտասը, չի փոշիանում մեր ազգային ինքնությունը: